

With funding from
Austrian Development Cooperation

ICARE
INTERNATIONAL CENTER FOR AGRIBUSINESS RESEARCH AND EDUCATION

**Նախագիծը ֆինանսավորվում է
Ավստրիական զարգացման համագործակցության կողմից:
Նախագիծն իրականացնողն է ICARE հիմնադրամը:**

Ավելին՝ →

ICARE Հիմնադրամ
Հայաստան, ք. Երևան,
Տերյան 74

098-334-565, 010-569-670
info@icare.am
icare.am

fruitenia

## ՖՐՈՒՏԵՆԻԱ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

**ՖՐՈՒՏԵՆԻԱ** նախագծի առաջնային նպատակն է բարձրացնել այգեպտղաբուծության ոլորտի ընդհանուր մրցունակությունը շահառու ֆերմերների շրջանում: Նախագիծը կխթանի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացումը շնորհիվ ագրոնոմիական ուղղվածությամբ արդիական առարկայացանկի, դասավանդման նոր մեթոդների և բարձրորակ մասնագետների, ովքեր հնարավորություն կունենան գործնականում վերապատրաստվել նախագծի շրջանակում հիմնվող ինտենսիվ պտղատու այգում:

**ՖՐՈՒՏԵՆԻԱ** նախագիծը ներառում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ՝ այգեպտղաբուծության ոլորտում: Այգեպտղաբուծության ոլորտի ժամանակակից մեթոդները շահառու ֆերմերներին հասանելի կլինեն կարճ տեսաձայնագրությունների և այլ ուսումնական նյութերի միջոցով, որոնք կզետեղվեն aygi.am տեղեկատվական առցանց հարթակում:

**ՆԱԽԱԳԻԾԸ ԿԽԹԱՆԻ՝**

- Այգեպտղաբուծության ոլորտի մրցունակության բարձրացումը
- Կայուն և կլիմային ուղղված գյուղատնտեսության զարգացումը
- Պտղաբուծության ոլորտում գենդերային հավասարությունը և սոցիալական ներառվածությունը

**ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ԵՆ՝**

- Այգեպտղաբուծության ոլորտի կարիքների գնահատում
- ՀԱԱՀ-ում ժամանակակից առարկայացանկի մշակում և կիրառում, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտելիքների ընդլայնում և դասավանդման կարողությունների զարգացում
- Այգեպտղաբուծության ոլորտում կարճաժամկետ հավաստագրային ծրագրերի մշակում և իրականացում
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ ժամանակակից այգեպտղաբուծության ոլորտում
- Ինտենսիվ պտղատու այգու հիմնում
- Ամառային ճամբարների կազմակերպում ՀԱԱՀ, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար՝ նրանց մոտ հետաքրքրություն առաջացնելու դեպի կայուն գյուղատնտեսությունը և համայնքների զարգացումը:
- Գյուղատնտեսության ոլորտում գենդերային հավասարությանը ուղղված միջոցառումներ

